ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 60) 71-00-92, info@armin.am, www.armin.am, www.ysu.am

№ 3/2015 « 30» սեպտեմբեր 2015 թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3/2015

## ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 2015Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ

**Նիստին ներկա էին գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամներից 25-ը (քսանհինգ): Նիստը նախագահում էր ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Հ. Սիմոնյանը:**

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների աշխատանքները համակարգող հանձնաժողովի նախաձեռնությունների քննարկում:
2. Մուսա լեռան հերոսամարտի 100-ամյակին նվիրված միջոցառման իրականացում:
3. Հայ-վրացական հարաբերությունների բաժնի գիտաշխատող Վ. Վիրաբյանի «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ.» մենագրության տպագրության երաշխավորման հարցը (զեկուցող՝ բաժնի ղեկավար Հրաչիկ Բայրամյան):
4. Ընթացիկ այլ հարցեր:

**Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:**

1. **Լսեցին.** ԵՊՀ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների աշխատանքները համակարգող հանձնաժողովի նախաձեռնությունները:
   **Որոշեցին.** – Աջակցել հանձնաժողովի ներկայացրած ծրագրերին:

2. **Լսեցին.** Մուսա լեռան հերոսամարտի 100-ամյակին նվիրված միջոցառման իրականացման անհրաժեշտության մասին:
   **Որոշեցին.** – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հետ համատեղ կազմակերպել Մուսա լեռան հերոսամարտի 100-ամյա տարելիցին նվիրված միջազգային գիտաժողով:

3. **Լսեցին.** – Հայ-վրացական հարաբերությունների բաժնի գիտաշխատող Վ. Վիրաբյանի «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ.» մենագրության հրատարակության երաշխավորելու մասին: Ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Հ. Սիմոնյանն առաջարկեց դրական ընթացք տալ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի միջնորդությունը:

**Որոշեցին.** – Հայ-վրացական հարաբերությունների բաժնի գիտաշխատող Վ. Վիրաբյանի «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ.» մենագրությունը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ Մ. Ս. Հովհաննիսյան

30.09.2015 թ.

Կ. Տ.